



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**  
**ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” ..... 2021թ.

N.....

«ԼԵՌԻ ԷՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն  
 Ս. Ոսկանյանին  
 հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ,  
 ք. Կապան, Մ. Ստեփանյան 41/41

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(Վարչական վարույթ հարուցելու և լուսմներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Ոսկանյան,

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունվարի 27-ի թիվ 93-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ԼԵՌԻ ԷՔՍ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ :

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լուսմները տեղի կունենան 2021 թվականի փետրվարի 1-ին ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի քննության համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2. 1-րդ կետով ընդերքօգտագործման իրավունքը կասեցվում է մինչև սահմանված տեղեկատվության ներկայացումը (բայց ոչ ավելի, քան 120-օրյա ժամկետով):

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունվարի 27-ի թիվ 93-Ա հրամանը – 2 թերթ:

X

---

Հարգանքով՝

Լ. Շուշանյան

Կատարող՝ Լիլիթ Փաշայան  
Իրավաբանական վարչություն  
Հեռախոս՝ 010 515-171